Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 փետրվարի 2025 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-46/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար զտիչների ձեռքբերման նպատակով 2024 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-46/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վի Քեյ Ինջինեիրինգ» ՍՊ ընկերությունը: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «Վի Քեյ Ինջինեիրինգ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել զտիչների մատակարարման պայմանագիր:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-46/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ սույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչված «Վի Քեյ Ինջինեիրինգ» ՍՊԸ-ին պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջը, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ուղարկվել է ս.թ. հունվարի 24-ին: Սակայն «Վի Քեյ Ինջինեիրինգ» ՍՊ ընկերությունը ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը միայն 1-ին չափաբաժնով և գրությամբ հրաժարվել է 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա

այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: ...»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է՝ «...3. եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումն, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:...»

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Վի Քեյ Ինջինեիրինգ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**